ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2024 թվականի №---Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Էներգոտեխնիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի օգոստոսի 13-ի №Է-076 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Մատակարար) կողմից խախտվել են Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ ՋՄՕԿ) պահանջները, մասնավորապես, Ընկերությունը հայտնել է հետևյալը.
   ա. Ընկերությունը՝ 2024 թվականի մարտի 4-ի №Է-019 գրությամբ, դիմել է Մատակարարին՝ խնդրելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան 21 փողոցի 14 հասցեում իրեն պատկանող տարածքը ապահովել խմելու ջրի մատակարարմամբ,
   բ. ի պատասխան դիմումի՝ Մատակարարը՝ 2024 թվականի մարտի 7-ի №ՄՇ/7989 գրությամբ, Ընկերությանը տեղեկացրել է, որ նոր միացում կարող է իրականացվել ՋՄՕԿ-ի 15-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում: Այդ փաստաթղթերն են՝
      - տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթի պատճենները,
      - իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը և հարկ վճարողի հաշվառման համարը,

- ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը,
- կառուցվող (կառուցված) օբյեկտի տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը,
- դիմումը քննության առնելու և դրան համապատասխան ընթացք տալու համար 2000 դրամի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,

գ. Ընկերությունը՝ 2024 թվականի մարտի 12-ի №Է-025 գրությամբ, Մատակարարին է ներկայացրել վերջինիս կողմից պահանջված փաստաթղթերը, ինչին ի պատասխան՝ Մատակարարը 2024 թվականի մարտի 22-ի №ՄՇ/10032 գրությամբ տեղեկացրել է, որ դիմումին ընթացք տալու համար անհրաժեշտ է ներկայացնել հասցեի 1:2000 մասշտաբով կադաստրային քարտեզը՝ կադաստրային ծածկագրի և տարածքի հստակ նշումով,

դ. Ընկերությունը՝ 2024 թվականի մարտի 25-ի №Է-034 գրությամբ, Մատակարարին է ներկայացրել վերոնշյալ գրությամբ պահանջվող տեղեկատվությունը, ինչին ի պատասխան՝ Մատակարարը 2024 թվականի ապրիլի 1-ի №ՄՇ/11252 գրությամբ տեղեկացրել է, որ անհրաժեշտ է ներկայացնել հասցեի համար համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից կազմված ջրապահանջի հաշվարկը,

ե. Ի պատասխան վերոնշյալ պահանջի՝ Ընկերությունը՝ նույնը օրը №Է-037 գրությամբ,Մատակարարին հայտնել է, որ խմելու ջուրն անհրաժեշտ է միայն խմելու և կենցաղային կարիքների համար,

զ. Մատակարարը՝ 2024 թվականի ապրիլի 30-ի №ՄՇ/15881 գրությամբ, հայտնել է Ընկերությանը, որ տեղազննում չապահովելու պատճառով դիմումի քննարկումը հետաձգվել է, և տեղազննումը ապահովելու պատրաստակամության դեպքում առաջարկել է կրկին դիմել իրեն,

է. Ընկերությունը՝ 2024 թվականի մայիսի 2-ի №Է-051 գրությամբ, Մատակարարին հայտնել է, որ խնդրո առարկա տարածքում իրականացվում է շուրջօրյա հերթապահություն և տեղազննման անհնարինության հարց չի կարող լինել,

ը. Մատակարարը՝ 2024 թվականի մայիսի 22-ի №ՄՇ/19324 գրությամբ, Ընկերությանն է տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան 21 փողոցի 14 հասցեում խմելու ջրի մատակարարման ապահովման նպատակով կազմված տեխնիկական պայմանները, որոնցով նախատեսվել է Մատակարարի ջրամատակարարման համակարգին միացումն իրականացնել մոտ 20 մետր հեռավորության վրա գտնվող d=700մմ, P=1.2 մթնոլորտ պողպատե խողովակից,

թ. Ընկերությունը՝ 2024 թվականի մայիսի 29-ի №Է-060 գրությամբ, ի թիվս այլնի, Մատակարարին հայտնել է, որ իր տարածքից մոտ 15 մետր հեռավորության վրա գտնվում է ավելի ցածր ճնշման խողովակ, որից ևս հնարավոր էր տրամադրել միացման կետ,

ժ. Մատակարարը՝ 2024 թվականի հունիսի 17-ի №ՄՇ/23004 գրությամբ, անդրադառնալով ջրամիացման կետի տրամադրմանը, հայտնել է, որ ջրամիացման ելակետի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ միացման կետում ստատիկ ճնշումը կարող է լինել առավելագույնը 8.5 մթնոլորտ (քանի որ միացման կետում՝ ջրի հոսքի հակառակ ուղղությամբ, մոտ 90մ բարձրությամբ նիշում, առկա է մարիչ հոր)՝ տարածքում առկա ՀԷԿ-ում ջրի հոսքերի սեղմման՝ պատնեշ ստեղծելու դեպքում, իսկ ոչ աշխատանքային պայմաններում ՀԷԿ-ում հոսքերի առջև սեղմման պատնեշը բացակայելու պարագայում միացման կետում ճնշման մեծությունը կլինի ավելի ցածր, ուստի՝ ճնշման կարգավորիչ տեղակայելու պարագայում տարածքում հնարավոր կլինի ապահովել նորմատիվային ճնշում: Ինչ վերաբերում է Ընկերության դիտարկմանը՝ տարածքից 15մ հեռավորության վրա անցնող խողովակին միանալու վերաբերյալ, Մատակարարը հայտնել է, որ d=80մմ ջրագծում ճնշումը տատանվում է ըստ սեզոնային ջրօգտագործման՝ 0.8-ից մինչև 1.1 մթնոլորտ, այդ ջրագիծը սնում է մի շարք բաժանորդների և այդ ջրագծից լրացուցիչ ջրամիացում կատարելու դեպքում ճնշումը կարող է էլ ավելի իջնել, ինչի պարագայում անհրաժեշտ կլինի տեղակայել պոմպ, որը, բնականաբար, կբերի լրացուցիչ ծախսերի: Մատակարարը հայտնել է նաև, որ պատրաստակամ է Ընկերության հետ քննարկել տեխնիկական պայմանների վերանայման հնարավորությունը՝ տրամադրելով կողմերի միջև

փոխհամաձայնեցված տարբերակ, պայմանով, որ Ընկերությունը համաձայնվի լրացուցիչ ծախսեր կատարելու հետ,

2) Հանձնաժողովը, Ընկերության կողմից ներկայացված դիմումի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով, 2024 թվականի օգոստոսի 19-ի №ՍԱ/34.3-Մ4-6/3891-2024 գրությամբ դիմել է Մատակարարին,

3) Մատակարարը՝ 2024 թվականի սեպտեմբերի 6-ի №ՄՇ/35925 գրությամբ, տեղեկացրել է, որ տեխնիկական պայմանները տրամադրելիս առաջնորդվել է ՋՄՕԿ-ի պահանջներով, և տեխնիկական պայմանները սահմանվում են՝ ելնելով Մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից: Միաժամանակ հայտնել է, որ, հաշվի առնելով Ընկերության դիմումները, որով վերջինս հայտնել է իր անհամաձայնությունը Մատակարարի կողմից տրամադրված ՎՋ/2148/2024 տեխնիկական պայմանին և պահանջել է միացման հնարավորություն տալ այլ կետից, 2024 թվականի հունիսի 19-ին մշակել և Ընկերությանն է ներկայացրել վերանայված ՎՋ/2778/2024 տեխնիկական պայմանները, որով նախատեսվել է միացման երկու տարբերակ և Ընկերությանն առաջարկվել է ընտրել այդ պայմաններից իր համար ցանկալին,

4) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 10-ից Մատակարարի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ՋՄՕԿ-ի 2-րդ բաժնով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Մատակարարը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի №ԳԲ/34.3-Մ4-6/4279-2024 գրությամբ,

5) հարուցված վարչական վարույթի շրջանակում ներկայացված 2024 թվականի սեպտեմբերի 19-ի №ՄՇ/37995 գրությամբ՝ Մատակարարը հայտնել է, որ, չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գ. Մայիսյան 21 փողոցի 14 հասցեում գտնվող նոր համակարգի կառուցման համար տեխնիկական պայման տրամադրելու խնդրանքով բազմաթիվ դիմումներ է

ներկայացրել Մատակարարին, այդ դիմումները չեն համապատասխանել ՋՄՕԿ-ի պահանջներին: Մասնավորապես՝ առաջին դիմումին կցված չեն եղել պարզաբանման ենթակա և տեխնիկական պայմանի տրամադրման համար էական նշանակություն ունեցող որոշ հանգամանքներ(մասնավորապես՝ անհրաժեշտ էր ներկայացնել 1:2000 մասշտաբով կադաստրային քարտեզը, ճշգրտել պահանջվող ջրաքանակը), ինչի մասով ամփոփ տեղեկատվությունը Ընկերության կողմից ներկայացվել է 2024 թվականի ապրիլի 1-ի №Է-037 գրությամբ, որի շրջանակներում էլ չի ապահովվել տեղազննությունը: Նշվածը հաշվի առնելով՝ տվյալ պահին տեխնիկական պայմանի տրամադրման անհնարինությամբ պայմանավորված՝ 2024 թվականի ապրիլի 30-ի №ՄՇ/15881 գրությամբ առաջարկվել է ապահովել տեղազննություն: Միևնույն ժամանակ, Մատակարարը կրկին ներկայացրել է նաև 2024 թվականի սեպտեմբերի 6-ի №ՄՇ/35925 գրությամբ արդեն իսկ ներկայացված տեղեկությունները՝ Ընկերությանը երկու հնարավոր տարբերակներով տեխնիկական լուծումներ առաջարկած լինելու առնչությամբ,

6) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում ներկայացված 2024 թվականի սեպտեմբերի 18-ի №Է-088 գրությամբ, խնդրել է իր հաշվին նշանակել փորձագետներ՝ Մատակարարի գործողությունների մանրամասները, դրանց պատճառները և այդ գործողությունների արդյունքում Ընկերության կրած վնասները գնահատելու նպատակով,

7) Մինչև 2024 թվականի հունիսի 20-ը գործող խմբագրությամբ ՋՄՕԿ-ի իրավակարգավորումներով նախատեսված էր հետևյալը.

   ա. ՋՄՕԿ-ի 2-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեխնիկական պայմանները նոր միացման նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ են, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից,

   բ. ՋՄՕԿ-ի 10-րդ կետի համաձայն՝ նոր համակարգը, դիմող անձի հայեցողությամբ, կառուցում է մատակարարը կամ դիմող անձը, բացառությամբ՝ ՋՄՕԿ-ի 11.2-րդ կետով սահմանված դեպքի: Նոր համակարգը,

բացառությամբ առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղակայման, կառուցվում է դիմող անձի հաշվին: Նոր համակարգի կառուցումը և Հայաստանի Հանրապետությանը դրա սեփականության իրավունքի անհատույց հանձնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

գ. ՋՄՕԿ-ի 11.1-ին կետի համաձայն՝ դիմող անձի կողմից նոր համակարգը կառուցվում է մատակարարի տրամադրած տեխնիկական պայմանների հիման վրա: Նոր համակարգի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմող անձի հայեցողությամբ, իրականացնում է մատակարարը կամ մատակարարի պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմող անձի հաշվին: Կառուցված նոր համակարգի մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացումն իրականացնում է մատակարարը՝ դիմող անձի հաշվին:

դ. ՋՄՕԿ-ի 15-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նոր միացման նպատակով Մատակարարին ներկայացվող դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը.

- ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը.
- հարկ վճարողի հաշվառման համարը.
- տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթի պատճենները.
- կառուցվող (կառուցված) օբյեկտի տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը.
- միացվող (միացված) օբյեկտի տեխնիկական բնութագիրը.
- դիմումը քննության առնելու և դրան համապատասխան ընթացք տալու համար 2000 դրամի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը.
- արտադրական գործունեության դեպքում՝ Խմելու ջրի պահանջվող քանակի հաշվարկը.

- արտադրական գործունեության դեպքում՝ հեռացվելիք ջրի (մաքրվելիք կեղտաջրերի) քանակը և բաղադրությունը:

ե. ՋՄՕԿ-ի 16-րդ կետի համաձայն՝ դիմումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը դիմող անձին է ներկայացնում՝

- տեխնիկական պայմաններ՝ դիմող անձի կողմից նոր համակարգի կառուցման դեպքում.
- միակողմանի կնքված միացման պայմանագիր՝ մատակարարի կողմից նոր համակարգի կառուցման դեպքում.
- մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման սխեմա՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ մատակարարի, կամ այլ հեռանկարային զարգացման ծրագրերի միջոցով նոր համակարգի կառուցման դեպքում:

զ. ՋՄՕԿ-ի 17-րդ կետի համաձայն՝ դիմումը կարող է մերժվել, եթե չի համապատասխանում ՋՄՕԿ-ի 15-րդ կետով սահմանված պահանջներին: Դիմումի մերժման դեպքում Մատակարարը 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Դիմող անձին: Դիմումի մերժման դեպքում, Կանոնների 15-րդ կետի համաձայն, դիմող անձի վճարած 2000 դրամ գումարը չի վերադարձվում,

է. ՋՄՕԿ-ի 85-րդ կետի համաձայն՝ մատակարարը բաժանորդի կամ դիմող անձի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ՋՄՕԿ-ով առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ: Մատակարարը պարտավոր է սպառիչ պատասխանել դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դրա առնչությամբ գործող օրենսդրական դաշտը, Մատակարարի և Բաժանորդի կամ Դիմող անձի իրավունքներն ու պարտականությունները:

8) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Մատակարարը խախտել է մինչև 2024 թվականի հունիսի 20-ը գործող խմբագրությամբ ՋՄՕԿ-ի 16-րդ կետի ու 85-րդ կետերի պահանջները, այն է՝ սահմանված ժամկետում Ընկերությանը չի տրամադրել տեխնիկական պայմաններ և Ընկերության 2024

թվականի մարտի 4-ի դիմումին տվել է ոչ սպառիչ պատասխան: Մասնավորապես՝ Ընկերությունը Մատակարարին դիմել է 2024 թվականի մարտի 4-ին, մարտի 12-ին և մարտի 25-ին, և նշված բոլոր դեպքերում Մատակարարը սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում մերժել է դիմումները՝ որոշակի փաստթղթերի և տեղեկատվության բացակայության պատճառով, մինչդեռ 2024 թվականի ապրիլի 1-ի դիմումին Մատակարարը պատասխանել է ՋՄՕԿ-ով նախատեսված՝ տեխնիկական պայմանների տրամադրման ժամկետի՝ 20 աշխատանքային օրվա վերջին օրը՝ ապրիլի 30-ին՝ №ՄԾ/15881 գրությամբ, որով հայտնել է՝ տեղազննում իրականացնելու հնարավորության բացակայության պատճառով դիմումին ընթացք չտալու մասին: Այս առումով հարկ է նշել, նաև որ թեև ՋՄՕԿ-ով տեղազննման հետ կապված կարգավորումներ նախատեսված չեն, այդուհանդերձ, անհրաժեշտ աշխատանքները կազմակերպելու համար գործող կարգավորումներով Մատակարարին տրված է 10 աշխատանքային օր ժամանակահատված, որի ընթացքում վերջինս կարող է կազմակերպել դիմումի ուսումնասիրման հետ կապված բոլոր աշխատանքները, այդ թվում՝ հայտնաբերել մերժման հնարավոր հիմքերը: Ապա, ուսումնասիրելով Ընկերության դիմումներին ներկայացված Մատակարարի պարզաբանումները և մերժումները, փաստվել է հետևյալը.

առաջին անգամ Ընկերությունը Մատակարարին դիմել էր 2024 թվականի մարտի 3-ին, ինչին ի պատասխան՝ Մատակարարը մարտի 7-ին ներկայացրել էր պահանջվող փաստաթղթերի ցանկը, մինչդեռ ներկայացված ցանկից բացակայում էին ՋՄՕԿ-ի 15-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» և «է» պարբերություններով նախատեսված՝ միացվող (միացված) օբյեկտի տեխնիկական բնութագիրը և արտադրական գործունեության դեպքում՝ խմելու ջրի պահանջվող քանակի հաշվարկը: Սա, ըստ էության, խնդիր չէր լինի, եթե Մատակարարը, ի պատասխան Ընկերության 2024 թվականի մարտի 25-ի դիմումի, չմերժեր այն՝ պատճառաբանելով, որ դիմումում բացակայում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից կազմված ջրապահանջի հաշվարկը, միչնդեռ հենց ինքը Ընկերությանը ներկայացված փաստաթղթերի պահանջում դա չէր նախատեսել, թեև Ընկերության ներկայացրած փաստաթղթերից պարզ էր, որ միացվող տարածքը հիդրոէլեկտրակայան է, որի նպատակային նշանակությունը նշված է՝ որպես «արտադրական»:

Ինչ վերաբերում է Ընկերության միջնորդությանը՝ Մատակարարի գործողությունների մանրամասները, դրանց պատճառները և այդ գործողությունների արդյունքում իր կրած վնասներն ի հայտ բերելու նպատակով փորձագետներ նշանակելու վերաբերյալ, ապա այն ենթակա չէ բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն օրենքի «Վարչական վարույթի ընթացիկ փուլը» վերտառությամբ 6-րդ գլխի 45-րդ հոդվածի համաձայն՝ եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում նշանակել փորձագետ, ապա վարչական մարմինն այդ հարցով դիմում է համապատասխան կազմակերպության ղեկավարին կամ համապատասխան անձին՝ այդ մասին ծանուցելով վարույթի մասնակիցներին:

Տվյալ դեպքում՝ վարչական վարույթը հարուցվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով՝ Մատակարարի կողմից ՋՄՕԿ-ի 2-րդ բաժնով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որպիսի փաստի պարզմանը և դրա առկայության պարագայում Մատակարարի նկատմամբ վարչական ակտ ընդունելուն ուղղված վարչական վարույթի շրջանակներում Ընկերության կողմից մատնանշված հարցերի պարզումը չի հանդիսանում վարույթի համար նշանակություն ունեցող և բացահայտման ենթակա փաստական հանգամանք, ուստի, առկա չէ դրանց պարզմանն ուղղված գործողություններ իրականացնելու անհրաժեշտություն:

Բացի այն, հարկ է նշել, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող անձի կատարած իրավախախտման հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով, ուստի, վնասի չափի հաշվարկման և հատուցման հետ կապված հարաբերությունները դուրս են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից և ենթակա են լուծման օրենսդրությամբ սահմանված կարգով, ուստի՝ սույն վարույթի շրջանակում փորձագետների նշանակելու անհրաժեշտությունը բացակայում է,

և հիմք ընդունելով Ջրային օրենսգրքի 47.1-ին հոդվածի 1-ին մասը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մինչև 2024 թվականի հունիսի 20-ը գործող խմբագրությամբ ՋՄՕԿ-ի 16-րդ և 85-րդ կետով սահմանված պահանջների խախտման համար Մատակարարին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2024թ.